

ՆՈՐԱՅՐ ԱՐՔԵՊ. ՊՈՂԱՐՅԱՆ

Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼՈՒ ՁԵՌԱԳԻՐ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ Ս. ՀԱԿՈԲՅԱՆՑ ՎԱՆՔԻ ՁԵՌԱԳՐԱՏԱՆ ՄԵՋ

Ներսես Շնորհալի պարծանքն է արծաթի դարուն: Ան ունեցած է բեղուն գրիչ, և տված հայ մատենագրության իր բարձրարժեք նպաստը բազմազան երկերով: Իր երկերը արժանացած են բազմաթիվ ընդօրինակությանց և կգրավեն հայկական ձեռագրատուններու մեջ պատվո բարձր տեղ: Հոս կը-փորձենք ներկայացնել ինչ որ կգտնվի իր աշխատություններեն, ս. Հակոբյանց վանքի ձեռագրատան մեջ, գլխավորները առանձնապես, իսկ փոքրերը՝ ընդհանուր ձևով:

Ա.—**Ողբ Եդեսիոյ,** 10 օրինակ, ոմանք առանձին, ուրիշներ՝ իր չափաբանական այլ երկերուն հետ միասին, կամ տարբեր ժողովածուներու մեջ:

1.—Թիվ 476, ԺԸ դար, նոտրագիր:
2.—Թիվ 1240, Երուսաղեմ, 1686, նոտրագիր, գրիչ՝ Հովհաննես երեց, հալեպցի, Ղալեմքյար:
3.—Թիվ 1396, նոտրագիր, գրիչ՝ Գրիգորիս:
4.—Թիվ 1447, նոտրագիր, գրիչ՝ Խաչատուր երեց:
Նկար՝ Ներսես Շնորհալի, էջ 14:
5.—Թիվ 1482, Երուսաղեմ, 1809, շեղագիր, գրիչ և ստացող՝ Մեսրոպ վրդ. Սկյուտարցի:
6.—Թիվ 1563, Կ. Պոլիս, 1817, շեղագիր, գրիչ՝ տ. Գեորգ Սրապյանց, Անկյուրիացի:
7.—Թիվ 1638, Բոլենց գյուղ, 1614 , գրիչ՝ Հակոբ:
8.—Թիվ 1660, բոլորգիր, գրիչ՝ Վահրամ:
9.—Թիվ 2125, նոտրագիր:
10.—Թիվ 2803, Երուսաղեմ, շեղագիր, գրիչ և ստացող՝ Մինաս վրդ. Ամրիկյան:

Բ.—**Յիսուս Որդի,** 19 օրինակ, ոմանք առանձին, ուրիշներ՝ իր չափաբերական այլ երկերուն հետ միասին, կամ տարբեր ժողովածուներու մեջ: «Յիսուս Որդի»-ներեն շատերը միասին ունին նաև չափաբերական քանի մը գրություններ ևս, ինչպես նշված են մեր ձեռագրաց ցուցակներում:

1.—Թիվ 964, ԺԷ դար, նոտրագիր:
2.—Թիվ 1208, նոտրագիր:
3.—Թիվ 1238, ԺԵ դար, նոտր-բոլորգիր:
4.—Թիվ 1240, տես «Ողբ Եդեսիոյ»:
5.—Թիվ 1338, բոլորգիր:
6.—Թիվ 1404, Ղրիմ, 1612, բոլորգիր, գրիչ՝ Զաքարիա աբեղա:
7.—Թիվ 1447, տես «Ողբ Եդեսիոյ»:
8.—Թիվ 1472, նոտրագիր:
9.—Թիվ 1476, Թոխաթ, 1592, նոտրագիր, գրիչ և ստացող՝ Մորաճ, որդի Միրաքի:
10.—Թիվ 1579, նոտրագիր:
11.—Թիվ 1604, թկ. 1444, բոլորգիր, գրիչ՝ Սիմեոնն:
Նկար «Տեր Սբ. Ներսես», էջ 5:
12.—Թիվ 1633, բոլորգիր: Նկար «Տեր Ներսես», էջ 4:
13.—Թիվ 1638, տես «Ողբ Եդեսիոյ»:
14.—Թիվ 1651, Բաղեշ, 1623, բոլորգիր, գրիչ՝ Գրիգոր երեց, ծաղկող՝ Սահակ, ստացող՝ Սահակ աբղ. Շատախցի:
15.—Թիվ 1660, բոլորգիր, գրիչ՝ Վահրամ:
16.—Թիվ 1694, թկ. 1642, նոտրագիր, գրիչ՝ Փիլիպպոս:

17.—Թիվ 2152, բոլորգիր, գրիչ և ստացող՝ Կիրակոս Կրոնավոր:
18.—Թիվ 2345, Ըռատոզ, 1654, նոտրագիր, գրիչ և ստացող՝ Կիրակոս Դպիր:
19.—Թիվ 3690, նոտրագիր, թվ. 1772:

Գ.—**Բանք Հափաւ,** 11 օրինակ, որոնք կպարունակեն Ն. Շնորհալիի քերթողական մանր երկերը, ինչպես նաև հանելուկները, հաճախ «Յիսուս Որդին» և երբեմն «Եղեսիոյ Ողբ»-ն ալ միասին: Այդպիսի ձեռագիրներ են հետևյալները.

1.—Թիվ 1240: Տես «Ողբ Եդեսիոյ»:
2.—Թիվ 1404: Տես «Յիսուս Որդի»:
3.—Թիվ 1447: Տես «Յիսուս Որդի»:
4.—Թիվ 1579: Տես «Յիսուս Որդի»:
5.—Թիվ 1604: Տես «Յիսուս Որդի»:
6.—Թիվ 1633: Տես «Յիսուս Որդի»:
7.—Թիվ 1638: Տես «Ողբ Եդեսիոյ»:
8.—Թիվ 1694: Տես «Յիսուս Որդի»:
9.—Թիվ 1734: Նոտրագիր: Գրիչ՝ Նիկողայոս:
10.—Թիվ 3184, բոլորգիր: Գրիչ՝ Հովսեփ:
11.—Թիվ 3361, Թեքիրտաղ, 1639, նոտրագիր: Գրիչ՝ Գրիգոր երեց:

Ասոնց վրա կրնանք ավելցնել նաև թ. 1016 ձեռագիր ժողովածուն, որ կպարունակե Շնորհալիի վերագրված 139 հանելուկներ, էջ 216ա—231ա: Օրինակված է Սարգիս վարդապետի ձեռքով, ԺԷ դարուն նոտրագրով:

Դ.—**Նամականի,** 14 օրինակ, որ կպարունակե ընդհանրական մեծ կոնդակը, միութենական բանակցությանց առթիվ գրված թուղթերը, ինչպես նաև զանազան անձերու ուղղված նամակները: Ձեռագիրներեն ոմանք զուտ նամականի են, իսկ ուրիշներ կպարունակեն տարբեր գրվածքներ ևս:

1.—Թիվ 89, Ականց Անապատ, 1273, բոլորգիր: Գրիչ՝ Ղազար: Ստացող՝ Ստեփանոս՝ Հայր Ականց Անապատի:
2.—Թիվ 596, Կ. Պոլիս?, 1779, նոտրագիր: Գրիչ՝ Ստեփանոս Ղուկասյան, Կ. Պոլսեցի:
3.—Թիվ 633, Երուսաղեմ?, 1634?, նոտրագիր: Գրիչ՝ Խաչերես սարկավագ: Ստացող՝ լուսարար Մարկոս Դարանաղցի:
4.—Թիվ 641, Կ. Պոլիս, 1779, նոտրագիր: Գրիչ՝ Ստեփանոս Ղուկասյան, Կ. Պոլսեցի:
5.—Թիվ 645, նոտրագիր:
6.—Թիվ 652, նոտրագիր:
7.—Թիվ 672, թվ. 1699, բոլորգիր: Գրիչ՝ Խաչատուր: Ստացող՝ Պարոն Ավետիք:
8.—Թիվ 773, Կաֆա?, 1359?, նոտրագիր հնատիպ: Գրիչ՝ Անտոն քահանա: Նկար՝ Ն. Շնորհալի, թղ. 4բ:
9.—Թիվ 835, թվ. 1604, նոտրագիր: Գրիչ՝ Շեհրի: Ստացող՝ Ջիրաք:
10.—Թիվ 858, ԺԷ դար, նոտրագիր: Ստացող՝ Սինան վրդ. Ամթեցի:
11.—Թիվ 936, թվ. 1702, նոտրագիր: Գրիչ և ստացող՝ Սուքիաս վարդապետ:
12.—Թիվ 1085, Լով, 1606, նոտրագիր: Գրիչ՝ Հակոբ դպիր: Ստացող՝ Կարապետ արքեպիսկոպոս:

Ս. Ներսես Շնորհալի. «Հայր երկնաւոր», Ձեռաց Մաշտոց (Մատենադարան, ձեռ. № 8620, Կ. Պոլիս, 1676 թ.)



Ս. Ներսես Շնորհալի. «Առաւօտ լուսոյ», Ժամագիրք (Մատենադարան, ձեռ. № 435, Էջմիածին-Նորագավիթ, 1685 թ.)

13.—Թիվ 1156, Իլով, 1611, նոտրագիր: Գրիչ և ստացող՝ Սահակ աբդ. տարոնացի:
14.—Թիվ 1875, թկ. 1682, բոլորգիր: Գրիչ՝ Արիստակես քահանա:



Ս. Ներսես Շնորհալի. «Մառագայթ փառաց», Շարակնոց (Մատենադարան, ձեռ. № 9838, Երուսաղեմ (և) Խաչիկ հոր անապատ, 1193 թ.)

Ե.—**Մեկնութիւն Աւետարանին Մատթէոսի:** Մեզի հասած են երկու տարբեր խմբագրություններ, երկուքին մեջ ալ Ն. Շնորհալիի գրած մասը կհասնի մինչև գլուխ Ե, համար 17: ԺԳ դարուն Արիստակես վրդ. կամ իր աշակերտը Եփրեմ ամբողջացուցած են հիշյալ մեկնությունը: Այս առաջին խմբագրության կպատկանին հետևյալ 9 ձեռագիրները:
1.—Թիվ 258, Կաֆա, 1620, բոլորգիր: Գրիչ և ծաղկող՝ Զաքարիա դպիր՝ Ճանտեմիր: Ստացող՝ Խաչատուր վրդ. Կաֆայեցի:
2.—Թիվ 283, Ավագ վանք, 1486, բոլորգիր: Գրիչ՝ Թորոս քահանա: Ստացող՝ Ստեփանոս վարդապետ:
3.—Թիվ 332, թկ. նախքան 1278, բոլորգիր: Գրիչ՝ Ստեփանոս, ստացող՝ Սիմեոն վարդապետ:
4.—Թիվ 458, Կիլիկիա, ԺԳ դար, բոլորգիր: Գրիչ՝ Թումաս: Ստացող՝ Կոստանդին Կրոնավոր:
5.—Թիվ 707, Երուսաղեմ, 1756, նոտրագիր: Գրիչ՝ Եղիա վրդ. Կեսարացի:
6.—Թիվ 889, Եվքառա, Կեսարիա, 1710, նոտրագիր: Գրիչ՝ Հարություն երեց Կեսարացի:
7.—Թիվ 932 (թերի), ԺԸ դար, նոտրագիր: Կպատկաներ Կեսարացի Եսայի վարդապետին, 1740-ին:
8.—Թիվ 1031, բոլորգիր: Գրիչ՝ Դավիթ դպիր:
9.—Թիվ 2017, բոլորգիր հնատիպ:

Մատթեոսի մեկնությունը հետագայում շարունակած է նաև Հովհաննես վրդ. Ծործորեցի և լրացուցած 1316-ին:

Այս վերջինը տպագրությամբ լույս տեսած է Կ. Պոլիս, 1825-ին: Սույն խմբագրության կպատկանին վեց ձեռագիրներ:
1.—Թիվ 275, Կ. Պոլիս, 1781, նոտրագիր: Գրիչ՝ Բրաբիոն Նոտար: Ստացող՝ Թովմա վրդ. Վանեցի:
2.—Թիվ 416, նոտրագիր:
3.—Թիվ 581, թկ. 1674, նոտրագիր: Գրիչ՝ Պողոս քահանա:
4.—Թիվ 719, նոտրագիր:
5.—Թիվ 967, ԺԸ դար, նոտր-շեղագիր: Ստացող՝ Պետրոս եպս. Կեսարացի:
6.—Թիվ 3320, թկ. 1729, նոտրագիր, գրիչ՝ Կարապետ երեց:

Զ.—**Մեկնութիւն Դաւիթ Անյաղթի «Բարձրացուցէք» ճառին,** 4 օրինակ:
1.—Թիվ 989, էջ 141ա—237, ԺԸ դար, նոտրագիր:
2.—Թիվ 1072, էջ 506ա—575: Թվական 1611, նոտրագիր:
3.—Թիվ 1102, էջ 193—369, ԺԸ դար, նոտրագիր:
4.—Թիվ 1631, էջ 1—25, ս. Անտոնի Մենաստան, Կաֆա, 1429, նոտրագիր: Գրիչ և ստացող՝ Թադեոս աբդ. Ավրամենց:

Է.—**Մեկնութիւն Բանից Դաւթի «Ամենայն չար տանջելի»,** 9 օրինակ:
1.—Թիվ 401, էջ 520—532, ԺԳ—ԺԴ? դար: Բոլորգիր:
2.—Թիվ 885, էջ 236—240, Շոռոթ (Երընջակ), 1642, նոտրագիր: Գրիչ՝ Հովհաննես երեց:
3.—Թիվ 974, էջ 124—139, Երեր քաղաք, 1634, նոտրագիր: Գրիչ՝ Ներսես աբեղա:
4.—Թիվ 989, էջ 30—42, նոտրագիր, ԺԸ դար:
5.—Թիվ 1078, էջ 95բ (թերի), նոտրագիր:
6.—Թիվ 1291, թվ. 515բ—518ա, ս. Գեորգ վանք՝ Եկեղյաց գավառ, 1337, նոտրագիր հնատիպ: Գրիչ՝ Ներսես սարկավագ: Ստացող՝ Խաչատուր Կրոնավոր Ատանացի:

7.—Թիվ 1304, թղ. 98բ—113ա, ս. Գեորգ Անապատ, 1332, բոլորգիր: Գրիչ՝ Հովհաննես Կրոնավոր:
8.—Թիվ 1410, էջ 150—181, Էտրենե, 1725, նոտրագիր: Գրիչ և ստացող՝ Սարգիս ա-բեղա:
9.—Թիվ 1514, էջ 529—539, բոլորգիր:

Ավելի քան քսաներկու ձեռագիր Ժամագրքերու մեջ Շնորհալի ունի զմայլելի երգեր, «Յիշեսցուք», «Աշխարհ ամենայն», «Առաւօտ լուսոյ», «Այսօր անճառ», «Աստուած անեղ», «Նորոգող», «Նորաստեղծեալ», «Արարչական», «Յարեւելից», «Ճգնաւորք», «Լոյս», «Ծանապարհ», «Օրհնեմք զքեզ» և «Նայեաց սիրով»: Ինչպես նաև «Հաւատով խոստովանիմ» սքանչելի աղոթքը, 24 տուն:

Տասնյակներով գանձարաններու մեջ ունի ս. Վարդավառի և ս. Աստվածածնի Վերափոխման նվիրված գանձեր:

Տասնե ավելի Տաղարաններ կպարունակեն իր հոգևոր տաղերեն—թվով ավելի քան քառասուն—բավական նմուշներ, լման կամ մասնակի ձևով:

Վենետիկ, 1830-ին, «Բանք Զատիկ» խորագրով տպված իր քերթվածներու ժողովածուին մեջ կարգ մը տաղեր պակասավոր են: Այդ թերիները լրացնելու համար, 1949-ին, «Սիոն»-ի մեջ, հրատարակած ենք հետևյալ տաղերը:

1.—«Տաղ Աստուածայայտնութեան», էջ 63:
2.—«Տաղ Մեծի ուրբաթի», էջ 63—64:
3.—«Տաղեր Յարութեան զկնի եղաբերից», էջ 93—94:
4.—«Գովեստ ի ս. Գր. Լուսաւորիչ», էջ 132—133:
5.—«Տաղ Մեծի Ներսէսի», էջ 175—176:
6.—«Տաղ սուրբ Խաչի», էջ 176:
7.—«Տաղ Յարութեան Քրիստոսի», էջ 216:
8.—«Երգ ի բաշխումն ս. Խորհրդոյ», «Հասկ», 1952, էջ 40:

Շատ մեծ և արժեքավոր է Ն. Շնորհալիի բաժինը մեր Շարակնոցին մեջ: Ցուցակագրած ենք 105 Շարակնոցներ, որոնք կպարունակեն հետևյալ կանոնները, **Եւթանասնից, Յովնանու, Աղուհացից Կիւրակէից, Ծաղկազարդի, Հոգեգալստեան Բ—Է աւուրց, Վարդավառի և Վերափոխման Բ և Գ աւուրց, Մարգարէից, Յակոբայ Մծբնայ Հայրապետին, Մանկանցն Բեթղեհէմի, ս. Հրեշտակապետաց** և **ս. Ղեւոնդեանց**, ինչպես նաև **Աւագ շաբաթի օրհնութիւնները, Յովհաննու Մկրտչի Ծննդեան Հարցը, Հռիփսիմեանց Համբարձին, Վարդանանց Նորահրաշը** և բազմաթիվ Մանկունքներ՝ հաճախ ստեղի:

Անշուշտ ամբողջը չէ այս: Ն. Շնորհալիի զանազան գրությանց կիսանդիպինք բազմաթիվ ժողովածուներու, և «Հաւատով Խոստովանիմ»-ին, շատ մը Աղոթագրքերու մեջ:



Ս. Ներսես Շնորհալի. «Տաղ ի ս. Խաչն», Գանձարան, ԺԴ դար (Մատենադարան, ձեռ. № 3503)

Դժվար է գտնել ուրիշ հայ հեղինակ մը, որուն գրությունները տեղ գտած ըլլան այսքան բազմաթիվ ձեռագիրներու մեջ: Իր քանակով և որակով պատկառելի է Շնորհալիի թողած ժառանգությունը, գնահատված սերունդե սերունդ և դարե դար, և պիտի շարունակե մնալ իր բարձր պատվանդանին վրա ոչ միայն մեր մոտ, այլ նաև օտարներու, որոնք դեռևս լիովին չեն ճանչցած Հայաստանյայց եկեղեցվո իսկապես Շնորհալի բանաստեղծ և աստվածաբան այս մեծ Հայրապետը: